№ 12 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1894

ԴՐՕՇԱԿ

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ“ ՕՐԳԱՆ

Հոկտեմբեր, 1894 թ.

Կռիւ Սասունում, կոտորած Մշում, կոտորած Եւդոկիայում, կախաղան Բաղէշում, բանտարկութիւն և խուզարկութիւն երկրի ամեն մի անկիւնում, արգելք գաղթականներին և պանդուխտներին վերադառնալ հայրենիք, Տաճկահայաստանից դուրս գտնվող տաճիկների, չէրքէզների հոսանք դէպի Տաճկահայաստան, Համիդիէի նոր զօրախմբերի կազմակերպելը . . . և այս բոլորը մի բուռն անզէն, անպաշտպան, չարքաշ, աշխատասէր հայ երկրագործ և արհեստաւոր ժողովրդի դէմ է։ Ինչո՞ւ. — որովհետև նա յանդգնութիւն ունի բողոքելու տիրող վայրենի և գազանային պայմանների դէմ, որովհետև նա համարձակվում է պաշտպանել իր անձը, պատիւը, աշխատանքը բաղդախնդիրների, գողերի դէմ, որովհետև նա ձգտում է բարեփոխել երկրի այժմեան պայմանները, ձեռք բերել անկախ կեանք, ինքն իրեն կառավարելու իրաւունք։ Ահա այս պահանջի դէմ, իբրև պատասխան, սուլթանի „ողորմած“, „հայրախնամ“ կազմակերպված կառավարութիւնը դէմ է դնում իր ամբողջ ուժով՝ թնդանոթներով ու զօրքով, աւազակ քրդերով և բաղդախնդիր բաշիբուզուկներով, և այն էլ ինչ միջոցներով.— աւերակ, մոխիր դարձնելով գիւղեր, սրի, կրակի տալով մանուկ, աղջիկ, կին, տղամարդ . . . Այո՛, սուլթանի կառավարութիւնը աշկարայ, առանց ամօթի, առանց կարմրելու դուրս է եկել իր ամբողջ ուժով ժողովրդի դէմ, գործ դնելով այն միջոցները, որոնք տեղի էին ունենում մարդկութեան պատմական կեանքի այն ժամանակամիջոցում, երբ գոռող ու բաշիբուզուկ յաղթող բռնակալը յաղթված ժողովրդի դիակներից աշտարակներ էր շինում և նրա բարձրութիւնից էր դիտում իր ձեռքով աւերակ, մոխիր դարձրած երկիրը, հիանում էր մարդկային արիւնով ներկված բնութիւնով և իբրև նշան գոհունակութեան, հրճուանքի, ամբողջ սրտից դժոխային քրքիջ արձակում . . .

Տասն և իններորդ դարում, որով պարծենում է եւրոպական բուրժուազիան, տալով նրան ամեն տեսակ սիրուն ու լաւ ածականներ՝ ազատութիւնից մինչև եղբայրութիւն, նոյնատեսակ դէպքեր են տեղի ունենում նոյն իսկ այդ „ազատութեան և եղբայրութեան“ դարի զաւակների աչքի առաջ։

Միակ տարբերութիւնն այժմեան բռնակալ սուլթանի և նախկին բաշիբուզուկ բռնակալի մէջ նրանումն է, որ այժմեանը նստած իր փառահեղ պալատում՝ անձամբ չի մասնակցում, այլ հրամաններ ու ծրագիրներ է տալիս ոչնչացնել ամեն ինչ, ոչինչ չթողնել ազատվելու այն տարրից, որ խանգարում է իր հարեմական հանգստութիւնը, որ սպառնում է նրան զրկել իր հիւրիների փաղաքշանքից, որ խանգարում է նրան իր վաւաշոտ, անասնային կրքերին ազատ, հանգիստ բաւականութիւն տալու։ Եւ դրա համար նա մարդկային զոհեր է պահանջում, դրա համար նա արիւն է ուզում, դրա համար նրան աւերակներ են հարկաւոր. նա ուզում է դիակների և աւերակների վրայ թագաւորել իբրև լեշակեր, միայն թէ հանգիստ, խաղաղ կեանք ունենայ . . .

Եւ ահա նրա հաւատարիմ գամիռները, սոված, լերբ գեադաները, որ դրան մօտ շնթրած՝ սպասում են հացի փշրանքի, ամենայն եռանդով ու հաւատարմութեամբ կատարում են իրենց տիրոջ հրամանը-ցանկութիւնը, որովհետև քաղցած են, որովհետև դրանք Եղբլզի պալատի արիւնախում գահակալի տիպարներիցն են. պատրաստակ բռնելով ամեն չնչին բան, յարձակվում են ժողովրդի վրայ իրենց գազանական ամբողջ կրքով, լլկում, թալան ու կոտորած անում։

Տաճկահայաստանն այժմ արեան դաշտ է դարձել.— արիւնոտ են նրա աղբիւրները, գետերը, արիւնոտ են նրա արտերը, դաշտերը, մարգագետինները, հրդեհի է տուած, մոխիր է դարձրած գիւղացու տուն-տեղը, աւարի, թալանի է տրված նրա ունեցածը. գազան քրքիջի և զինուորի սուիններով վրայ են բարձրացրած անմեղ մանուկներին, կոյս աղջիկներին, խարոյկի վրայ են խորովում տղամարդկանց։ Ահա այսպէս է յաղթեցնում իր գազանային ծարաւը բռնակալը, սրա օրինակին են հետևում և գամիռ-փաշաների, բէյերի շարքը . . .

Թշուառ և անբաղդ երկիր, թշուառ և անբաղդ ժողովուրդ... Մինչև ե՞րբ, մինչև ե՞րբ պէտք է շլինքդ ծռես ստոր, տմարդ սուլթանի կառավարութեան լծի տակ, մինչև ե՞րբ պէտք է տանես կոտորածը, մինչև երբ պէտք է տանես նահատակի կեանքը... Բաւական է, բաւական, հայ ժողովուրդ, կրել այդ անարգ լուծը, տանել ամեն տեսակ անպատուութիւն։ Թշնամին ոչինչ չի խնայում, իսկ դո՞ւ... դու միշտ նոյն ստրուկը, նոյն հլու հպատակը. բաւական չէ՞։

Բաւական է քաջարի սասունցու համար. նա այլ ևս անկարող է տանել այդ ամօթալի լուծը, ահա նա բարձրացրել է ապստամբութեան դրօշակը, յոյսը դնելով իր լերան ծերպերի, ժայռերի, քարերի վրայ. էլ ո՞ւմ վրայ կարող էր դնել... Սասունն ապստամբվել է, Սասունը կռվում է մենամենակ, և ո՞ւմ դէմ։— Կազմակերպված, թնդանօթներ և կանոնաւոր զօրք ունեցող կառավարութեան դէմ։

Բայց այդ կազմակերպված „հզօր" կառավարութիւնը մի քանի ճակատամարտից յետոյ, յոյսը կտրում է զէնքով ճնշել սասունցուն և նա դիմում է ստոր խորամանկութեան, նրան խաբում է. հաշտութեան դրօշակ է բարձրացնում. սասունցին, ազնիւ, բնութեան այդ հարազատ զաւակը հաւատում, իջնում է իր ծերպերից, մօտենում է հաշտութիւն խնդրողին և... գնտակահար է լինում, մի գիւղ էլ թշնամուն զոհ տալիս։ Բայց այդ չէ յուսահատեցնում քաջ սասունցուն, որ վճռել է կամ մեռնել պատուաւոր մահով կամ ջարդել անարգ ստրկի լուծը, նորից ամրանում է իր բնութեան գրկում և շարունակում է իր կռիւը։

Սասունն ապստամբվել է, Սասունը կռվում է։ Կառավարութիւնը կատաղած, փրփուրը բերնին, վրէժխնդրական ոգով լցված, կոտորած է անում։ Նա վճռել է ամեն ինչ մոխիր դարձնել, նա վճռել է դիակների վրայ բարձրանալ և այնտեղից հրճվիլ, զուարճանալ արիւնոտ, մոխիր դարձած տեսարանով...

Իսկ մե՞նք. մենք սասունցուն մենակ ենք թողել, մշեցուն գազանի ճանկը գցել, կախաղանը դիակներով զարդարել. ահա մեր արածը, —ամօ՞թ։ Ամօ՞թ, երբ թշնամին վճռել է ոչնչից ոչինչ չխնայել, ամեն ինչ ոչնչացնել, մենք դարձեալ անտարբեր ենք դէպի տանջվող, չարչարվող, մարտիրոս դարձած ժողովուրդը. ամօ՞թ, երբ անզէն, յուսահատ ժողովուրդը, անկարող լինելով տանել աննկարագրելի, անլսելի գազանութիւններ ու բռնութիւններ, գլուխ է բարձրացրել ընդդիմադրում է, ջանքեր է անում իրեն պաշտպանելու, և մենք օգնութեան ձեռք չենք կարկառում. ամօ՞թ, երբ երկիրը զրկվում, ամայանում է ժողովրդից, երբ ամեն ինչ քանդում, աւերակ են դարձնում, երբ մօրը գրկից սուինով են խլում մանուկը և մօրը քարաժայռից գլորում, երբ լիրբ ու լրբիրշ անպատուութեան են տալիս կոյս աղջկայ մարմինը և ապա իբրև դիակ սուինի վրայ բարձրացնում, երբ եղբայրը քրոջն սպանում է իբրև միակ միջոց նրա „ազատութեան", երբ... Եւ մենք ձեռներս ծալած՝ հանգիստ նստած ենք առանց՛ կարմրելու, առանց ամօթի։ Ո՛չ խղճի խայթ, ո՛չ պատի զգացում. ինչի՞ ենք նման... Ամօ՞թ է. ինչո՞ւ ապրել. ապրել տմօթանք տանելո՞ւ, ապրել ստրուկ լինելո՞ւ։ Բաւական է, բաւական այս ամօթանքը, ժամ է արդէն վերջ տալ անարգ լծին, ժամ է արդէն կամ ապրել իբրև մարդ, կամ մեռնել պատուաւոր մահով. ընտրենք երկուսից մէկը...

ԱՊՍՏԱՄԲՈՒԹԻՒՆ Ի ՍԱՍՈՒՆ

Այս առաջին անգամը չէ, որ Սասուն գլուխ կը բարձրացնէ. 80-ական թուականներէն սկսեալ Սասունցիք միշտ տեսակ մը պատերազմական դրութեան մէջ են։ 91 թիւն էր, երբ տաճիկ պետութիւնն այդ բուռը քաջերու դէմ 2000-էն աւելի զօրք և թնդանօթներ ղրկեց, բայց կոտորածով և խայտառակութեամբ ստիպված եղաւ յետ փախչիլ։

Այդ անընդհատ կռիւներու միակ պատճառն հարկն է. պետութիւնը կուզէ կիսանկախ լեռնական Սասունի զաւակներու վզը հարկերու ծանր լուծի տակը մղտցնել, իսկ այդ բուռ մը կտրիճները, որ դարերէ ի վեր սորված են հարկ չվճարելու, ամեն կերպ աշխատած են դիմադրել և այսօր ալ կը դիմադրեն քաջաբար։

Ան ալ նկատելու է, որ եթէ նոյն իսկ Սասունցին ուզենայ հարկ տալ, ոչինչ ունի վճարելու, վասն զի այդ լեռնածերպերն անոր այնքան պտուղ չեն կրնար հասցնել, որ գէթ իրեն ապրուստը հայթհայթէ, ուր մնաց հարկ վճարելը։

Դեռ այս ամառ, յուլիս ամսի սկզբները պետութիւնը մարդ ղրկեց և հարկ ուզեց քաջ Տալորկայ զաւակներէն. անոնք բացէ ի բաց մերժեցին։ Վալին 300-ի չափ զօրք և խել մը քուրդ ցեղեր ոտքի հանեց անոնց դէմ, բայց սասունցիք ցրեցին այդ ամենն առաջին իսկ յարձակմամբ։ Փաշան ուզեց օգտվիլ հանգամանքներէն, լռութիւն պահպանեց և դէպ Սասուն տանող միակ ճամբու կամուրջը, որ քանդեր էին սասունցիներն 1891-ը ապստամբութեան ատենը, ուզեց նորէն շինել, որ հեշտութեամբ մտնի Սասնոյ սիրտը։ Սասունցիք հասկցան բանի էութիւնը. յարձակեցան կամուրջ շինողներու վրայ։ Թուրքերն օգնութեան եկան. սասունցիք մօտ 10 մարդ կոտորելէն ետքը՝ կամուրջն ալ քանդեցին և լեռ ելան։ Փաշան բարկացաւ և նորէն ուզեց զօրք հանել սասունցոց դէմ։

Նոյն ատեն մէկ աւելի ծանր դէպք մ՚ալ տեղի ունեցաւ. քիւրդ աշիրէթներէն մէկ ցեղ մը յանդգնութիւն կունենայ յարձակիլ Սասունի Շէնիկ գիւղին նախրի վրայ և ոչխարներուն հօտը քշել տանել։ Կտրիճ

շէնիկցիք հրաւէր կը կարդան դրացի գիւղերուն, որ միացեալ ուժերով երթան, ոչխարը յետ բերեն և վրէժը լուծեն։ Հրաւէրն արձագանգ կը գտնի. խումբ մը կտրիճներ քիւրդերու վրաններու վրայ կը յարձակին, շատերուն կը վիրաւորեն և ոչխարները յետ կը բերեն։ Այս դէպքերէն քիւրդերը կատաղած, գազան դարձած, հրաւէր կը կարդան ամեն աշիրէթներուն՝ միանալ և կործանել ամբողջ Սասունը։ 10-էն աւելի քիւրդ ցեղեր, խելի մը կանոնաւոր զօրք հետներն առած, լեռնական թնդանօթներով օգոստոս ամսին մէջ կը խաղան Շէնիկ գիւղի վրայ։ Կին, տղամարդ, մանուկ, ծեր զինված են Շէնիկի մէջ. վճռեր են մինչև վերջին շունչ դիմադրել։ 7 օր շարունակ կը պաշարեն քիւրդերը, բայց առիւծ շէնիկցիք բարձրէն, անառիկ լեռներու գլխէն կրակ ու ժայռեր կը թափեն այդ գազանային բանակի գլխուն։ Քիւրդերու բոլոր ջանքերն ի զուր կանցնին։ Խեղճերն յոյսերնին կտրած՝ կսկսին յետ քաշվիլ։ Այդ ատեն առիւծասիրտ լեռնականները կայծակի պէս կը սլանան անոնց յետևէն, շփոթութիւն կը ձգեն և բաւական մարդիկ կը կոտորեն. դեակներուն ալ քիթ ու ականջները կտրելով՝ այրված սրտերնին կը հովացնեն ու լեռը կը քաշվին։ Ան ատեն քիւրտ ցեղապետները կերթան Մուշի փաշայի դուռը և լալագին օգնութիւն կը հայցեն, ըսելով, որ սասունցիք իրենց հանգիստ չեն տար։

Նոյն միջոցներն արդէն վրայ հասած էր կամուրջին պատմութիւնը, այնպէս որ փաշան առանց այն ալ կատաղած էր, իսկոյն իր տրամադրութեան տակն եղած փոքրաթիւ զօրքը, քանի մը քիւրդ ցեղերու հետ միասին ին զրկէ սասունցոց վրայ, ատոնք կոտորած մ՚ուտելով յետ կը փախչին, կուգան Մուշ ու սնոտի առասպելներ կը հնարեն, թէ իբր սասունցոց օգնութեան եկան բարձրէն, ամպերու մէջ նստած խումբ մը մարդիկ, որ սասունցիք կը պատրաստին Դաշտի վրայ քալելու... Փաշան կը դիմէ կեղտոտ խորամանկութեան, հաշտութիւն կառաջարկէ սասունցիներուն, կը խոստանայ հարկերէ ազատ. կացուցանել։ Միամիտ լեռնականները կը խաբվին և լեռներէն վար կիջնին։ Պատերազմական ամեն աղնութեան դէմ գնալով՝ այդ անամթ մարդիկը կը բռնեն մէկ գիւղի գլխաւորները, կը կոտորեն, գիւղը կաւերեն՝ ամեն անգթութիւն կընեն։ Մնացեալ սասունցիք կը զգուշանան և կրկին կամրանան իրենց լեռները։ Այն ատեն փաշան իրեն անզօրութիւնը տեսնելով, Սասուն պաշտօնապէս ապստամբած կը հրատարակէ և կը դիմէ Բաղէշու, Էրզրումի և այլ կուսակալներուն զօրք ուղարկելու։ Իսկոյն Էրզրումէն 2500 զօրք և քանի մ՚ալ լեռնական թնդանօթներ կը խաղան դէպի Մուշ. 500-ի չափ զօրք ալ կուգայ Բաղէշէն, ատոնց հետ կը միանան բոլոր քուրդ աշիրաթներն՝ որով կը կազմուի բաւական պատկառելի բանակ մը։ Ատոնց առաջ կընկնին Սասնոյ սահմանի պզտիկ գիւղերը. բնակիչք կը քաշուին Տալորիկ անառիկ աւանը, որ արծիւի բունի պէս կպած է երկնամբարձ ժայռերու կուրծքին։

Կը պաշարեն Տալորիկը, իսկ Սասունի կորիւնները կսկսեն իրենց գնտակի հեղեղները, քարերը տեղացնել ժանակի վրայ։ Դիմադրութիւնը կատաղի է, բայց արդեօք սովը, այս երկու, երեք սուղ տարիներու մշտական անօթութիւնը չի՞ ստիպեր խեղճերուն ընկճվելու։ Օգնութեան բնաւ յոյս չկայ. Դաշտեցու մէջքն այսօր վաղը կը կոտրվի բռնութեան ծանրութեան տակ. իսկ մենակ Սասունը հազիւ տասնեակ մը գիւղեր կը պարունակէ իր մէջ՝ ամենքն ալ աղքատ, օր հացի կարօտ։

Ռուսաստանի հայը կուզէր ցնցող դէպքեր, արիւնհեղութիւններ, որ օգնութեան հասնէր. ահա՛ և դէպքը, կրակը բռնկած է, շտապեցէք, փող, զէնք հասուցէք, գուցէ յաջողի այդ բուռն քաջերու կրակէն հրդեհ մը ծագեցնել։ Թէ ամեն ըսածնիդ հնչիւն բառեր չէին, օգնեցէք սասունցիներուն։

ԿՈՏՈՐԱԾ Ի ՄՈՒՇ

Մուշի և շրջակայ գիւղերու հայ ժողովուրդը Թահսի Փաշայի և կառավարական պաշտօնեաներու անլուր կեղեքումներէն ու հարստահարութիւններէն յուսահատած՝ խումբերով կը դիմեն կառավարութեանը, կեղեքիչներու պատժվիլը կը պահանջեն և իրենց յափշտակած գոյքերը կուզեն։ Կառավարութիւնն անուշադիր կը թողու ադոնց բողոքները, կը վռնտէ և կը փորձէ ցոյցի հեղինակները ձերբակալել։ Ժողովուրդը կը դիմադրէ և չի թուղուր, որ ձերբակալեն։ Այդ դիմադրութեան վրայ շփոթութիւնը կը մեծնայ. ամեն կողմէ հայեր և թուրքեր կը թափին կառավարութեան դուռը։ Ահա այդ ատեն կսկսի հայերու և թուրքերու ընդհարումը, որ կը վերջանայ հայերու յաղթութեամբ։ Հայերը մեծ ջարդ կուտան թուրքերուն՝ որ կը ձգեն, կը փախչին։ Օգնութեան եկած սակաւաթիւ զօրքն ևս խոյս կուտայ։ Հայերը Մուշի կառավարական տունը կը գրաւեն։ Միւթէսէրիֆը հեռագրով զօրք կը պահանջէ և մի և նոյն ժամանակ թուրք խուժանը կը գրգռէ։ Համիդիէ զօրքն օգնութեան կուգայ և, միանալով թուրք գրգռված ամբոխի հետ, կը յարձակին հայերու վրայ. կսկսի հայերու կոտորածը։

Մուշի կոտորածին մէջ հայերէն կսպանվին 270 հոգի, 400-500 հոգի ալ կը վիրաւորվին։ Ատոնցմէ զատ բազմաթիւ ձերբակալութիւններ, բանտարկութիւններ տեղի կունենան։ Համիդիէի զօրքը յարձակված է Շէնիկ, Սէմալ և ուրիշ 3 հայ գիւղերու վրայ. գիւղացիները փախած ապաստանած են Սասնոյ Տալորիկ գիւղը։ Համիդիէի զօրքը գիւղերը կողոպտելէն, թալանելէն ետքը՝ կը հրդեհէ, կրակ կուտայ յիշեալ 5 գիւղերը։ Այդ գիւղերն այժմ մոխրի կոյտեր կը ներկայացնեն։

ԿՈՏՈՐԱԾ ՑԵԻԴՈՒԿԻԱ

Հազարապետ մը խուզարկութեան համար քանի մը փոլիսներու և զափթիէներու հետ հայոց թաղը կերթայ և քանի մը տուն կը խուզարկէ յեղափոխական փընտրելու պատրուակաւ։ Տարակոյս չկայ, որ խուզարկութիւններն ապարդիւն կելնեն։ Հազարապետը կը պոռայ, կը կանչէ և յեղափոխականը կը պահանջէ։ Այդ միջոցին թուրք մունետիկ մը թուրքաց թաղը և շուկան կը շրջի, պոռալով՝ „Ցարձակվեցէք հայոց թաղի վրայ, կոտորեցէք անհաւատները, պղծեցէք անոնց կիները։ Մուհամէդէն կը վարձատրվիք“։ Մունետիկի այս հրաւէրի

վրայ մահմեդական զինեալ խուժանը կը յարձակի հայոց թաղի վրայ և կսկսի հայերուն կոտորել։ Կոտորածի մասին սոյգ տեղեկութիւններ տակաւին կը պակսին։ Եւդոկիայի հայերը թէ Բ. Դուռը և թէ պատրիարքարանը կոտորածի մասին հեռագրած են։ Պատրիարքարանը Սեբաստիայի առաջնորդին հեռագրած է Եւդոկիա մեկնիլ, երաց վիճակն ստուգել և տեղեկագրել։ Կառավարութիւնը Դիմաքսեանին հրամայած է Մուշի, Եւդոկիայի և Սասնոյ կոտորածի մասին որ և է խնդիր չը յարուցանել. Դիմաքսեանը 2 օր է Բէնի-Գաբու իրեն տունը քաշված է և պատրիարքարան չիկներ։ Դիմաքսեանի այդ վարմունքը դատապարտելի է, դաւաճանութիւն է և կը յիշեցուցնէ դաւաճան Աշըղեանի ընթացքը։ Այս ճգնաժամի ատեն Դիմաքսեանը կամ բացարձակապէս պիտի հրաժարի և կամ հարկաւոր դիմումներն ու պահանջներն ընէ։ Այս պարագաներու մէջ լռութիւնը, անտարբերութիւնը, չեզոքացումը, գործերը ձգել քաշվիլը մատնութիւն է, դաւաճանութիւն է։

ՆԱՄԱԿ ՊՕԼՍԻՑ

Կ. Պոլիս, 8 Հոկտ.

Ապօրինի պատրիարքական տեղապահ Դիմաքսեանը կառավարութեան հրամանով մայրաքաղաքիս մէջ գտնվող եպիսկոպոսները յատուկ հրաւիրագրերով օգոստոս 18-ին ժողովի հրաւիրած էր սուլթանի տարեդարձի առիթով հաւատարմութեան և երախտագիտութեան ուղերձ մը մատուցանելու համար ի դիմաց ընդհանուր հայ ազգի։ Ուղերձի մէջ եպիսկոպոսական ժողովն ի միջի այլոց հրապարակաւ պիտի յայտնէր, որ թէ իրենք և թէ համայն ազգը որ և է մասնակցութիւն չունին տեղի ունեցող քանի մը անկարգութիւններու, աստ և անդ երբեմն-երբեմն կատարված խռովութիւններու հետ, թէ այդ խռովութիւններու հեղինակները քանի մը բաղդախնդիր, հացկատակ, ազգի աչքէն և երեսէն ընկած չարագործներ են, որոնց պատժելը կը պահանջեն իրենք կայսերական արդարախնամ կառավարութենէն։

Տեղապահի հրաւիրագրերուն եպիսկոպոսներէն ոմանք նամակներով պատասխանեցին և ինչ ինչ առարկութիւններով չներկայացան, իսկ ոմանք ներկայացան և, օգտվելով բացակայ եպիսկոպոսներու առիթէն, յայտնեցին, որ առանց միւս եպիսկոպոսներու մասնակցութեան իրենք անկարող են որ և է ուղերձ մատուցանել և պատրիարքական տեղապահն ամօթապարտ ձգելով՝ մեկնեցան պատրիարքարանէն։ Այսպէս սուլթանի կառավարութիւնը դարձեալ խայտառակվեցաւ։ Եպիսկոպոսներու այս արարքը փառաւոր ապտակ մ'էր թուրք կառավարութեան երեսին։ Թուրք կառավարութիւնն այս ձեռնարկի անյաջողութենէն փրփրած՝ անմիջապէս հեռագիրներով դիմեց բոլոր հայաբնակ գաւառներու վալիներուն, որ ամեն միջոց գործ դնեն հայ ժողովրդի կողմէն հաւատարմութեան և երախտագիտութեան հանրագրութիւններ, շնորհակալութեան ուղերձներ կազմեն և մատուցանեն կայսերական գահոյից առջև։ Վալիները հեռագիրներն ստանալուն պէս փութեռանդ գործի ձեռնարկած են և ամեն տեսակ, ներելի ու աններելի միջոցներ գործ դնելով, հանրագրութիւններ կը կազմեն և կուղարկեն Բ. Դուռը։ Ապուշ կառավարութիւնը կը կարծէ, թէ այդ բռնութիւններով կազմած հանրագրութիւնները որ և է արժէք, կարևորութիւն կրնան ունենալ եւրոպական տէրութիւններու և եւրոպական հանրային կարծիքի առջև։

Ապօրինի պատրիարքական տեղապահը լինելով այն սխալ կործանիչ և ազգամեաս քաղաքականութեան ներկայացուցիչներէն մէկը, որոնք կուզեն կառավարութեան հետ անդրշ ըլլալ, անոր հետ քաղցր վարվիլ որ և է խնդիր, պահանջ ունեցած ատեն անուշութեամբ, խոնարհութեամբ դիմել կառավարութեան և իբր ողորմութիւն, իբր շնորհ խնդրել և ոչ իրաւունք, արդարութիւն պահանջել համարձակ և անվախ՝ դարձեալ մի անգամ չարաչար սխալվեցաւ ու պատժվեցաւ։ Արդեօք այս վերջին դառն դասէն յետոյ տակաւին պիտի շարունակվի՞ մատնիչ Սիմէօն-բէյի և դաւաճան, ուխտադրուժ Աշըղեանի գծած այդ սխալ ազգակործան քաղաքականութիւնը։

—Ապօրինի պատրիարքական տեղապահը կառավարութեանը հաճելի ըլլալու համար, սուլթանի կոյր աչքը քաղցրացնելու համար ամեն շողոքորդութիւն, ամեն զոհողութիւն, զիջում ըրաւ, եկեղեցու բեմէն կայսեր կենաց համար առասպելական փառաբանութիւններ և օրհնութիւններ կարդաց, սուլթանի հայրախնամ կառավարութեան ամեն գովեստներ թափեց, հայ եկեղեցու մէջ թուրքերէն երգ երգել տուաւ, կառավարութեանը համակերպելով՝ տարեդարձի առթիւ Ագարեանէն խոքը ներկայացաւ, ազգի դարաւոր իրաւունքը զոհեց և ազգային արժանապատուութիւնը վիրաւորեց, հարուածեց, և այս բոլորն այն յուսով, թէ պիտի յաջողի Ազգային Ժողով գումարելու հրաման ստանալ և ըստ սահմանադրութեան օրինաւոր պատրիարքական ընտրութիւն կատարել տալ...

ՔՐԴԱԿԱՆ ԱՐՇԱՒԱՆՔ
ԴԵՐԻԿԻ ՎՐԱՑ

Դերիկի մի ուխտաւորից ստացել ենք հետևեալ նամակը։

Օսմանլուի ոտնձգութիւնները տարածվում են հեռու, շատ հեռու, սահմաններից դուրս, նոյն իսկ ուրիշ պետութեան մէջ։

Հենց ամենից մեծ կասկածոտն ինքը՝ սուլթան Համիդն է, որ նստած Ժողովրդի արիւնով կառուցած փառահեղ պալատում, առաւօտից մինչև երեկոյ ահ ու դողով լրտեսում է Բոսֆորը, թէ քանի նաւ անցաւ և քանի հայկական ծպտեալ ապստամբներ կան դրանց մէջ։ Նրա անպատմելի կասկածը տարածվում է և Պարսկաստան, և Ռուսաստան, և Եւրոպա։ Գաղան փաշա-կուսակալները խօմ լցված են ամբողջովին սուլթանական ցնորական կասկածով։ Եւ շատ էլ չմեղադրենք այդ ասիական լպիրշ բռնապետին. նրա երկիրը ներկայացնում է մի մրրկալից ծով, ուր շարունակ ալեկոծութիւն, շփոթ է տիրում։ Երկիր, որ լցված է իրաւունքները բռ-

նաբարված, տնտեսական դրութիւնը քայքայված բազմազան տարրերով։ Ուր որ մի շփոթ, մի փոքրիկ դէպք պատահի, Համիտից սկսած մինչև փաշան, ծոյլ զաֆտեան ու անվարտիկ „ասկէրը“ կոտրած սպլի նման պատէպատ են ընկնում, գլուխները կորցնում, էլ չը դիտեմ, ի՞նչ դիւային թշնամու գնտեր երևակայում։

Այս ամառ Պարսկաստանում, գլխաւորապէս Տաճկահայաստանի սահմանագլխում, մի քանի հայեր և քրդեր սպանվեցան։ Յուլիսի սկզբներում պատահեց 5 խեղճ, ճամբորդ տաճկահպատակ քրդերի սպանութիւնը։ Մի հեռագիր անցաւ Պոլիս։ Անմիջապէս իրարանցում. իսկոյն վանայ վալին Թռաւ Բաշկալա, նստաւ սահմանագլխին։ Ողորմելի գործը տեղի էր ունեցել Դերիկի վանքի հողերից քիչ հեռու, տաճկա-պարսկական սահմանագլխի մոտ։ Բաւական էր այդ արիւնը փաթաթելու Դերիկի մէջ իբր թէ բուն դրած յեղափոխականների վզին, ինչպէս այդ սովորութիւն է Տաճկաստանում։ Թող ապահով լինեն օսմանլի փաշաները. դրական, իդէալով ներշնչված յեղափոխականը սուր չի բանձրացնի անմեղի, իր նման հարստահարվածի գլխին։

Կատաղած է փաշան, գազան դարձած։ Փրփրած՝ ոտները գետին է խփում, թող հանում։ „Դերիկը պիտի քանդվի, հենց վաղը, վաղը։ քար քարի վրայ չպիտի մնայ։ Հողի հետ հաւասարեցրէք, մուսուլմաններ. սուլթանի ամրն (հրաման) է, հայ ապստամբների արիւնով ներկված գլուխները վաղն այստեղ պիտի տեսնեմ, կոտորեցէ՛ք շներին... Դերիկը 4 տարի է անհանգստացնում է մեզ, դալվաթի (տէրութեան) նամուսը կորաւ, դերիկցիք սուլթանի հաւատարիմ 5 քիւրդին կոտորե՞ն. աւերե՛լ ձեզ եմ ասում, վաղը գլուխներ եմ ուզում...

Աղբակի բարբարոս քիւրդ ցեղապետներն ու աղաները, որոնք երկիւղածութեամբ շրջապատել էին փաշային, սարսափահար միմեանց երես էին նայում արիւնկալած աչքերով. քրդերն արդէն այդ յիմար դէպքից կատաղած էին։ Վալին մի բան էր անհանգստացնում. ի՞նչպէս կոտորած անել՝ քանի որ Դերիկը պարսից հողումն է։ Սակայն խարդախ սուլթանի ստոր կառավարութիւնն այդ ստոր ճանապարհները լաւ գիտէ։

Վալին առաջարկում է Շիկակների ամենագօրեղ ցեղապետին՝ Մամէին արշաւել հասարակ ասպատակողի անուան տակ, որպէս զի միջազգային խնդիր չծագի, խոստանալով նրան փաշայութիւն և թանկագին ընծաներ։ Մամէն յայտնում է, թէ անցեալում իր հայրը Պարսկաստանում 8 հոգով լաւ գիրք բռնելով, հարիւրաւոր պարսիկ զօրքերի դիմադրել և 70 մարդ կոտորել է։ Եւ եթէ դերիկցիները քաջ, լաւ հրացան ձգող չլինեն, ի՞նչպէս կարող են Դուշմանայ լեռներում, քիւրդերի մէջ վանք պահել. այդ պատճառով 100 զօրք տուէք և պատասխանատուութիւնը ձեր վրայ առէք։ Տասն օր դրդռելուց յետ, փաշան համոզում է Աղբակի մարզկցիների ցեղապետ Շարաֆին, որի բայեռներից էին 5 սպանված քիւրդերը։

Անմեղ և անլեհեր դերիկցիներն արդէն այդ չարագուշակ լուրն առել էին. իսկ ուխտաւորներն զգոյշ էին վարվում, միշտ զինված երթալով վանքը։ Յուլիսի կիսին մոտ այլ ևս ոչ մի կասկած չմնաց, որ արշաւանքն անխուսափելի է։ Գիշեր ցերեկ վանքը լրտեսվում էր, Դերիկի երկու ճանապարհին էլ Բահրի փաշայի սպառազինված քիւրդերով բռնված էր ամբողջ 15 օր։ Դրսի հետ յարաբերութիւնը բոլորովին կտրվեց, այլ ևս ոչ մի անցորդ չէր երևում. կատարեալ պաշարման դրութիւն էր երկաբ ու ձիգ օրեր։ Պատահական լրաբերները ասասպելներ էին պատմում. „Շարաֆն այսօր, երեկոյեան դէմ, վաղը, երրորդ օրը կը գայ 50, 100, 500 մարդով։“ Մի բուռն դերիկցիք տագնապի մէջ են։ Վանքի վերին Դերիկ կոչված գիւղի քրդերը սարսափից մի գիշեր տները թողին, փախան, որովհետև վտանգաւոր լուրեր էին առել։ Վանքի 3 տուն գիւղացիներից մէկն էլ իր կինն ու երեխաներն առաւ քրդերի հետ փախաւ։ Դերիկում մնաց մոտ 35 հոգի՝ 4 գիւղացի, 5 միաբան և 12 ուխտաւոր, մնացածը կանայք և երեխաներ։

Ուխտաւորներին վանքի փոխանորդ Սարգիսը պաղատանքով պահեց 5-6 օր, ի նկատի ունենալով վտանգը։ Աչքի առաջ ունենալով մոտալուտ արհաւիրքը, գիշեր-ցերեկ զինված պահապաններ է դրվում երեք որոշեալ տեղեր, որոշեալ „պարօլով“։ Լրտեսվում է մոտակայ լեռները։

Մի բուռն դերիկցիների տագնապը քանի գնում, աճում է։ Շրջապատված սահմանագլխի հսկայ Դուշմանի լեռներով ու խոր-խոր ձորերով, անդունդներով, ընկած աւազակ քիւրդ գիւղերի, մշտական գործող հրոսակների մէջ՝ ամեն մարդ իր գլխից արդէն ձեռք է վերցրած։ Ոչ մի Սալմաստեցի չի համարձակվում օգնութեան հասնել։

Իսկ փաշան, նստած սահմանագլխում, ուզում է բոլգարական տեսարան սարքել. խփում է ոտները գետնին, մորուսը փետում և Դերիկի ասպատակների գլուխները պահանջում։

Զուր էին պաշարվածներն անհամբեր նայում դիտակով ճանապարհներին. օգնութիւն չկայ, ո՛չ մի սալմաստեցի հայ չուզեց իր սրբավայրը պաշտպանելու վեր կենալ, թէև ամենքը գիտէին գալիք վտանգի մասին։ Դերիկցիները յոյսերն իրենց վրայ դրին՝ պաշտպանել վանքը մինչև վերջին շունչը։ Սկսվեց ուրախ երգերով տենդային աշխատանք. կրում էին շալակով աղիւս ու քար, ցեխ շաղախում։ Երկու օրուայ մէջ երեք փոքրիկ ամրութիւններ շինվեցան, որովհետև փոքրիկ վանքը զուրկ էր որ և է ամրութիւնից։

Յուլիսի 21-ի առաւօտը ամեն մարդ հանգիստ, բայց զինված իր գործին էր։ Ցանկարծ պահապանը հրացանաձգութեամբ նշան տուեց։ Հեռուից երևացին մի խումբ ձիաւորներ և սրարշաւ անցան վանքի արևելեան բլուրները, դէպի վանքի և գիւղի փոքրիկ նախիրի կողմը, որն այդ օրը սովորականից քիչ հեռու և տարաբախտաբար բլրի ետևին էր։ Մի քանի վարկեան ընդհանուր շփոթութիւն տիրեց, բայց շուտով ամեն մարդ իր տեղը բռնեց։ Թշնամին երևաց. դա սուլթան Համիդի „Համիդիէ“ գունդն է։ Սկսում ենք հրացանաձգութիւնը։ Հապա ի՞նչ տեսնենք լաւ՝ միաժամանակ հրացանաձգութիւն եղաւ քրդերի կողմից։ Բայց ի՞նչ գնտակ չէ, այլ կարկուտ, կար-

կուտ է թափվում մեր գլխին։ Կրակ են անում և արևմտեան, և՛ հիւսիսային, և՛ արևելեան լեռներից։ Ամեն ժայռի, ամեն սարի գլխից ծխի սպիտակ քուլաներ են, որ բարձրանում են դէպի երկինք. գնտակների վզզոցն ու սուլոցն ականջ են խլացնում, անդուռ սարերին արձագանք տալիս։ Շրջապատված ենք երեք կողմից բազմաթիւ քրդերով. ճիշտ թուի մասին ոչինչ չգիտենք։ Մեզ թւում է, թէ հազարներով ենք շրջապատված։ Սպիտակ քուլաները բարձրանում են ու բարձրանում և աւելի մօտենում։ Մենք աշխուժութեամբ պատասխանում ենք։ Վանքում իրարանցումը սաստկացաւ՝ մի կողմից երեխաների ճիչն ու աղաղակը, միւս կողմից կանայք ձեռքերն իրար շրպպացնում, ծնկներին տալիս ու շփոթված դէս ու դէն վազվզում և տոպրակներով սև օրուայ համար հաւաքած իւղը, պանիրն ու ալիւրը վանքը բերում շտապով։ Վրժժում են մեր գլխի վրայ մուխաննաթ սուլթանի ղրկած գնտակները։ Նայում ենք դիտակով հեռու, հիւսիսային բարձր լեռներից հրոսակային խմբերը ճանճի նման իջնում ու իջնում են դէպի մեզ և խոր ձորերում անհետանում... Թշնամին մօտենում է։ „Կոտորած, սարսափելի կոտորած... կանայք, օրիորդներ...“ մրմնջում էր ամեն մէկը։ Շփոթութիւնն ու պանիկան փոքր ժամանակ տիրեց ամենքին։ Ձիաւորները կպտղութեամբ սըլանում էին մէկ ձորից միւսը, մէկ բլուրից միւսը և մի ակնթարթում մեր աչքից անհետանում։ Նրանք միշտ դիմում էին մեր թոյլ կողմը, վանքի վրայ յարձակվելու համար։ 100-ից աւել ձիաւորներ, բոլորը 300-400 հոգի, բարձր լեռները բռնած, իսկ մենք, մի բուռը մարդիկ, թւով 21 և ցած տեղում, նրանց ոտների տակ, չորս տեղ դիրք բռնած։ Թշնամու մէջ էր նաև Բահրի փաշայի խարդախութեամբ սուլթանի հաւատարիմները, այն է՝ սահմանագլխի Խանիկ գիւղի Կորդօնի թուրք հարիւրապետը 50 ծպտեալ զրքերով։ Ի՞նչ էր մնում մեզ անել,— դիրքերից դուրս չգալ և պաշտպանվել մինչև վերջին ընկերոջ մեռնիլը։

„Տղե՛ր, ձեզ մեռնիմ, որդիներս, նախերը...“ բղաւեց լեռնական մայրը։ Փչում է դերիկցիների փոքրիկ փողը, երգում ենք „ամենայն տեղ մահը մի է...“ Արիութիւն եկաւ ամենքիս վրայ, տագնապը չքացաւ կորաւ։ Քիւրդերը հեռուից շրջապատել են նախիրը և գնտակոծում են 16 տարեկան նախրապանին ու նրա փոքրիկ եղբօրը (11 տարեկան), որն այդ օրը իր քէֆին գնացել էր նախրի մօտ։ Ամեն մի դերիկցի դարձել էր տասը, տեղում էին նախրի շուրջը (1 վերստ հեռու) մեր գնտակներն անվրդով, ահա բլուրը շուռ եկան փոքրիկները և վազում են դէպի մեզ, մեր գնդակները սաստկանում են, անպատկառ մուխաննաթները չեն կարողանում մօտենալ նրանց։ Ուրախութեան արցունք է երևում... Ամբողջ մի ժամ չարչարվելուց և մի քիւրդ զոհ տալուց յետոյ, քշեցին նախիրը։ Նրանց փափակը այդ մի քանի սևապոչ տաւարը չէր, այլ ուզում էին զբաղեցնել, գրգռել և մեզ դիրքերից դուրս հանել, որ կարողանան յարձակում գործել. խումբ-խումբ ձիաւոր հրոսակները դարան մտած մօտիկ ձորերում, ըսպասում էին նշանի։ Եւ քիչ մնաց յաջողէին։ Նախիրը քշելու ժամանակ մեր ընկերներից երկուսը գլխաբաց քրտնամխած դուրս թռան իրանց դիրքերից և սլացան դէպի նախիրը. որոշած էինք նախրի ետևից չգնալ և որպէս զի կորստաբեր սխալ չանենք (կարող էին երկուսին հետևել և ուրիշները), խնդրելով և յանդիմանութեամբ գրգռուածներին ետ դարձրինք։ Նախիրը քշեցին։ Երեխաների ողջ գալը մեծ ուրախութիւն պատճառեց։ 3 ժամ անդադար սուլում ու սուլում էր դերիկցիների անխարդախ և անշեղ գնտակը... Նրանք պաշտպանում էին ահագին խառնի ճաղանջի դէմ հայի սրբավայրը, Դերիկը, որի հետ կապված են անմոռանալի գործեր... քաղցր յիշողութիւններ... Նրանք պաշտպանում էին հայ կնոջ, աղջկայ նամուսը... Վախկոտ, վատ ասպատակները տեսան անդրդուելի, անվեհեր դիմադրութիւն, նրանց առաջ խաղալը դադարեց։ Մենք բոլորովին անվնաս էինք։ Ապստամբների գլուխ տանողները չուզեցին ճակատ առ ճակատ կռուի բռնել։ Առաւօտեան ութ և կէսից սկսվեց կռիւը և կէս օրից մօտ կէս ժամ անցած դադարեց։

Համիդ սուլթանի „Համիդիէ“ գունդը քիթ, թունդ քիթ ստացաւ։ 400 հոգու հրոսակային խումբը, որը իր ձեռքի տակ ունէր ամեն դիւրութիւն. լեռ, ձոր, քիւրդ գիւղեր, պաշար, մինչև անգամ թուրք զօրք, համարձակութիւն չունեցաւ մի խումբ մարդոց վրայ յարձակվել։ Զուր։ Միւս առաւօտ լրտեսեցինք մօտակայ լեռները, ոչ ոք չկար, քիւրդերը հեռացել էին ամօթապարտ։

Ահա թէ ինչ ձևերով օսմանեան կառավարութիւնը զեղծում է միջազգային օրէնքները, մնում այլ կառավարութեան հողը, ահա, թէ ինչ նպատակի համար սուլթանը իւր անուամբ „Համիտիէ“ քրտական գունդ կազմեց, որի աւազակապետն առանց քաշվելու իրան է նշանակել։

Լսեցինք, թէ նախրից մի էգ գոմէշ սատկել է, լաւ կանի Շարաֆ, եթէ նրա արիւնթաթախ գլուխը ներկայացնի կատաղած փաշային ապստամբի գլխի փոխարէն։

Հարևան քրդերի պատմելով՝ պաշարող քրդերի կողմից վիրաւորվել են ոչ թէ 3, այլ 7 հոգի, բայց այդ ամեն կերպ աշխատում են ծածկել։

—o—

ՆԱՄԱԿ ԽՆՈՒՍԻՑ

(Շար. և վերջ)

Այսպէս ժողովուրդն օրհասական վտանգի մէջ կը տատանի, բայց կառավարութիւն Կարինէն Մէհմէտ անուն փոլիսը ղրկած է Խնուս. սա սկսած է աջ ու ձախ ձերբակալել ամեն պատահողի յեղափոխականի անուան տակ. այսպէս ձերբակալուած են Քաղքիկ գիւղացի Տիրացուեան Արսէն աղայի որդին, Ալէքսան էֆէնտին և եղբօր որդի Մուշեղ երիտասարդն. նոյն գիւղացի Աւէ անուն անձը, Շապատին գիւղէն ըէյս Յակոբ և Շահնազար անուն անձինք։ Վերջինս ոստիկանաց յիսնապետի հետ ձի մը սակարկած է 6 ոսկով, իսկ յիսնապետը 3 ոսկի տալով՝ միւս 3-ը մի առնուր կըսէ, եթէ ոչ՝ կը ձերբակալեմ զքեզ. մինչ՞ չգիտեմ, թէ դու ինչ յանցանք ունիս։ Երբ Շահնազարն ունկնդրութիւն չի ներ սորա խօսքերուն, կը ձերբակալեն և կը նետեն բանտի մի անկիւն։

Ձերբակալված են նոյնպէս Մարուֆցի պատանի Աւագ, Խալիլ Չաուշցի Փափխենց Ղազար, Բերդ աւանի մղդսի Գէորգեան Խաչատուր էֆ., Հարեմենցի Մուրադեան Դաւիթ, Պօղոս պատուելին, Ձեվուրցի Ալէքսան և այլն։ Սոցա յանցանքներն ինչ է, յայտնի չէ։ Ասոնցմէ ոմանք վերոյիշեալ փօլիսի առաջին անգամ գալուն 94 թ. Ցունվար ամսոյ սկզբները ձերբակալվելով՝ թողվեցան, իսկ Մարտ ամսոյս սկզբները կրկին ձերբակալվելով՝ դեռ կը հեծեն բանտի մէջ։ Կառավարութիւնը կարծես կուզէ դրամական հաշիւ տեսնել սոցա հետ։ Բայց սոքա չունին, որ տան և բանտէն ազատին։ Այսպէս մէկ կողմէ հայ տարրն անօթութենէ կը մեռնի, միւս կողմէն ալ կառավարութիւնը ձերբակալութիւններ կընէ, երրորդ կողմէն ալ խստիւ հարկահաւաքութեան հրամաններ կարձակէ։ Մարտ ամսոյն մի քանի խումբ ոստիկաններ այս և այն գիւղը կը շրջին հարկ հաւաքելու համար։ Ժողովուրդն արդէն էքսաւորութեան մէջ կը տառապի և անօթութենէ կը նուազի, իսկ ոստիկանք անգթաբար ծեծ, չարչարանք կուտան առանց նայելու հասակը և սեռը։ Այսպէս, Ռաշաբ աղա անուն հարկահաւաք պաշտօնեան երբ Հարմիկ գիւղը կը հասնի, անլուր հայհոյանքներ կը տեղացնէ։ Ժողովուրդը այս ու այն գիւղ կը փախչի ապաստանելու։ Ռաշաբ աղէն կըսէ. „Հրաման տրված է ինձ կառավարութենէն, որ ով փախչի, զօրքերն իրենց ձիերով. կուղարկվին անոնց տունները և ոստիկանք նոցա կանանց գրկաց մէջ պիտի պառկին, մինչև որ հարկը բերեն։ Եթէ չէք հաւատար, ահա դիմեցէք կառավարութեան։“

Դաւրիշ չավուշ ձմրան ցուրտերուն, երբ Էլպիս գիւղէն ի Քաղքիկ կը հասնի, կսկսի հայհոյել կրօն, ազգ, պատիւ, սրբութիւն. ըսելով՝ թէ ա՛յ մատնիչներ, եթէ ձեր պատճառաւ չլինէր, ինչ գործ ունէի այս ձմեռուայ ցրտին այսչափ չարչարվիլ։ Այնպէս կը խօսին, կարծես եկած են աղքատ ժողովրդին հաց բաժանելու և նոցա ցաւերը բառնալու։

ՊՈԻԼԱՆԸԳ — Նոյեմբ. 15-ին Հասնանցի ցեղապետներէն մին 3-4 ծառաներով Համազալէյցի Հօթոյեան Արէի ջաղացքի վերան գիշերով կը յարձակին թալանելու, բայց ջաղացպան և իր ընկերը, դիմադրելով քրդերէն մին կը վիրաւորեն, որ երեք օրէն վերջ կը մեռնի։ Քրդերը վրէժ հանելու համար ամեն օր թէ գիւղի և թէ ջաղացքի վրայ յարձակում կը գործեն։ Առանց անձի վնասելու կը յաջողին բաւական ոչխարներ ու տաւար տանել։

Նոյեմբ. 25-ին Հասնանցի ցեղապետներէն Թէմօյի Իգիթի մարդիկ ըստ իրենց հին սովորութեան Շէրվանշէյխի հայերուն մալ կուտան ձրիապէս մինչև գարուն պահելու։ Երբ հայերը չեն ընդունիր, ետ կը դառնան և գիշերով կը յարձակին Թիճրի Զաքոյի տան վրայ և երկու եղբայրներէն մինը կսպանեն և միւսը կը վիրաւորեն։ Հասնանցի ցեղապետներէն Թաճտենի եղբայրներէն Սուվդին և Էվէյն Աճմու Իսուֆի հետ կը կռվին։ Առաջին երկուքը կռուի մէջ կը վիրաւորվին, որոնցմէ Սէդին քանի մ՝ օր վերջ կը մեռնի։ Նոյն կռուի մէջ Թաճտենի հօրեղբայր Քայրատէ կսպանվի, որոյ դէմ կտրելով Աճմու Իսուֆի մարդիկ կը տանին նշան կը զարնեն։ Երկու կողմէ կսպանվին 13 մարդիկ. 7-ը Թաճտենի, իսկ 6-ը Իսուֆի կողմանէ։

Անհաւասիկ վերոգրեալ տեղեկութիւններէն որոշակի կերևի թէ հայաստանցին ինչպէս մէկ օրուան, մէկ ժամուան մէջ կը զրկվի իր քրտնաթոր աշխատանքի արդիւնքէն։ Մեծ տոկունութիւն, համբերութիւն և եռանդ է հարկաւոր, որ մարդ երկար տարիների ընթացքում վաստակածը, երբ մի ակնթարթի մէջ կը կորսուեցնէ, նորէն սկսի առանց վհատելու ու յուսահատվելու աշխատիլ։ Մինթէ յուսահատած է հայ աշխատաւորը... սակայն յուսահատը երկու անմիջական եզրակացութեան կը հասնի.— մ ա հ կամ ա զ ա տ ու թ ի ւ ն։

—o—

ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԻ ԿԵԱՆՔԻՑ

Մի անգամ, պատմում է ականատես մի քահանայ, տեսնեմ զառիվայրից իջնում են մերկ գաղթական ընտանիքներ։ Քաղաք են մտնում՝ կիսամերկ ծերունի հայրը իր հարսներով, որդկերանցով։

—Ողջոյն ձեզ, ո՞րտեղից էք գալիս, մտենալով հարցնում եմ ես գաղթականներին։

—Օրհնեա՛ տէր, տէր հայր, լսվում է դալկացած ծերունու ձայնը։ Ալաշկերտից ենք գալիս, գաղթականներ ենք։

—Այդ ի՞նչ է շալակիդ բեռը, կրկին հարցնում եմ ես։

—Երկու կոտ ցորեն է, տէր հայր. դնացի տուն, օղլուշաղիս բերելու, այս ցորենն էլ շալկեցի, հետս բերի...

—Իսկ քո բեռինը ի՞նչ է, հարցրի ջահիլ հարսին, որ ցրտից կապտած, մարած աչքերով, գլխակոր կանգնած էր ծերունու կողքին։ Լռութիւն։ Կրկնեցի հարցս. դարձեալ լռութիւն։ Ամբողջ ընտանիքը շփոթութեան մէջ է. ես սկսեցի համոզել նրանց.— Ասացէք, ինձնից ի՞նչ էք քաշվում, ես ձեր խոստովանահայրն եմ... Մի վախենաք, ծխախոտ, կամ թէյ խո չէ՞։ — Եւ, երբ դարձեալ մնացի անպատասխան, մօտեցայ շշկլված կնոջը (խե՜ղճ, խե՜ղճ կին), իջեցրի ուսից բեռը, բաց արի և... սարսափած յետ քաշվեցի. երկու ծծկեր երեխաների սառած դիակներ էին մոր գրկում... Ցարայ, հողին յանձնեցի“։

Մի ուրիշ գաղթական հետևեալ սոսկալի դէպքն է պատմում, որ տեղի է ունեցել իրան մօտիկ բարեկամի ընտանիքի մէջ։

—Գիշեր է, սաստիկ ցուրտ. հասել ենք սահմանագլուխը։ Բարձրացել ենք Զիվինի ձորից և մի քանի քայլ է մնացել մինչև սահմանը։ Ի հարկէ գաղտնագողի ենք անցնում, լսել ենք, որ կազակներն առանց անցագրի չեն թողնում անցնել սահմանը։ Ուժասպառ բարձրանում ենք լեռների լանջերով։ Մեզ հետ են կանայք, երեխաներ։ Ամբողջ օրը ոչինչ չենք կերել։ Ցանկարծ հեռուից ձիաւորներ երևացին. — գիշերապահ կազակների խումբը։ Ծծի երեխան լալիս է՝ ցրտից, քաղցից։ Մայրը սեղմում է նրան իր կրծքին, տաքացնում է, — բայց իզուր։ Ծիծը դնում է բերանը, — կաթ չկայ, չորացել է, երեխան աւելի է բղաւում..

Կազակները մնտենում են, կարող են լսել, արգելել։ Երեխան շարունակում է մղկտալ հալումաշ ձայնով։ Կորուստն անխուսափելի է։ Ի նչ անէ տառապեալ մայրը։ Ամբողջ ընտանիքն ազատելու, յետ դառնալու վըտանգը հեռացնելու համար, նա վճռում է զրկվել իր ծծկեր երեխայից, նետելով նրան ժայռից ցած...»։

—

Գաղթականների կեանքից այս երկու բնորոշ նմուշները, որ դնում ենք այստեղ, պարզ ցոյց են տալիս այն դրութիւնը, այն կեանքը, որ տարել է հայ գաղթականը՝ այդ հալածեալն իր հայրենիքից, իր հողից։ Նա իր գոյութիւնը պահպանելու համար ինչ զոհողութիւն միայն յանձն չէ առել.— մայրն իր կենդանի երեխային ժայռից գլորում է... ահա՛ հայ գաղթականի կեանքը։ Խղճում է՛ք, թէ սարսափում. չէ՛, խղճացէ՛ք ձեզ, որ միայն գիտէ՛ք ասել, խօսել...

Գրիգոր Զարեհան

ԿԱԽԱՂԱՆ ԲԱՂԻՇՈՒՄ

—

Բաղէշի արիւնարբու դատարանը կախաղան բարձրացրեց Վարդենիս գիւղացի Մարգար վարժապետին։

Նախ քան կախաղանի մասին խօսելը, ասենք մի քանի խօսք, թէ ով էր այդ Մարգարը։

Դեռ ևս 1890 թ. քրդերը փախցնում են Վարդենիս գիւղից մի երիտասարդ և գեղեցիկ հարս։ Սարսափեցած տաճկահայի պատուասիրութիւնը վաղուց տափակել, բթացել է. իշխին համբերութեամբ նա տանում է ամենախայտառակ անպատուութիւններ, ամենաստոր ու ծանր զրկանքներ։ Այս անգամ էլ հայերը համբերեցին, բայց ոչ ամենքը։ Վարժապետ Մարգարն իր մի քանի ընկերների հետ ընկան քրտերի ետևից, յարձակվեցին նրանց վրայ, մի քանիսին վիրաւորեցին, երկուսին սպանեցին և հարսը յետ բերելով տիրոջն յանձնեցին։

Ի հարկէ, այդ բանից յետոյ Մարգարը չէր կարող մնալ Տաճկաստանում։ Նա փախաւ և ապաստան գտաւ Կովկասում, որտեղ նա մի քանի տաճկաստանցիների հետ վարժվում էր զէնք գործածելու արհեստի մէջ։

1891-ին գարնանը Մարգարը մտաւ „Դաշնակցութեան“ խմբերից մէկի մէջ, որը պէտք է զէնք անցկացնէր Մուշ և մի քանի այլ յանձնարարութիւններ կատարէր։ Խումբն յաջողութեամբ գլուխ բերեց իր գործը և թէ ինչ սրտագին, մտերմական ընդունելութիւն էր գտնում տեղական հայերի կողմից դրա մասին գրված է իր ժամանակին։

91թ. աշնանը Մարգարին մենք կրկին տեսնում ենք Կովկասում, որտեղից նա պատրաստվում էր հոչակաւոր Արաբոյի խմբի հետ նորից անցնել Տաճկաստան։ Քիչ յետոյ նա արդէն իր սիրած Խնուսում և Մշում էր, ուր շարունակում էր իր անխոնջ քարոզչութիւնը, իր ինքնավարժապետութիւնը։ Բայց դըժբաղդաբար նրա այդ գործունէութիւնն երկար չտևեց։ Նոյն ձմեռը նա ձերբակալվեց Աւգուստ գիւղում պատահած յուզման միջոցին։ Մարգարը բանտարկվել էր նոյն գիւղացի մի գծուծ հայի ամբաստանութեամբ, որի ասելով՝ գիւղի չավուշին հրացանով գնտակահար անողը Մարգարն է եղել։

Ամբողջ մի տարի Բաղէշի բանտերի խորշերում տանջելուց յետոյ, դատարանը նրան դատապարտում է, առանց կարողանալու հաստատել փաստօրէն նրա յանցանքը։ Բայց մի՞թէ տաճկական դատարանում օրէնք, արդարութիւն կայ, մի՞թէ տաճկական դատարանի համար փաստեր են անհրաժեշտ Մարգարի նման մարդկանցից ազատվելու համար... Դատարանը դատապարտեց կախաղանի։ Նա պէտք է կախվէր Բաղէշում, բաց հրապարակի վրայ, որպէս խրատ ու սարսափ մնացած յեղափոխականներին։

Ահա թէ ինչպէս է նկարագրում մեր թղթակիցը Մարգարի վերջին րոպէները.—

„Երբ Մարգար կը հրաւիրվի ի կախաղան, երեսնամեայ երիտասարդն պարզ, անխռով կը դիմէ դէպի մահ և կանգնած աթոռի վրայ, կախաղանի տակ, կը դառնայ դէպի յառխուռն բազմութեան և կը պոռայ. „Հայեր, մի վհատի՛ք, քաջ դիտցէ՛ք, որ այլ ևս հասած ենք մեր նպատակին։ Թէև ես կը մեռնիմ, բայց դուք պիտի ապրիք։ Միայն այն երջանիկ ժամանակ զիս ալ չմոռնաք։ Եթէ խանդակաթ այցելուներ ունենամ գերեզմանիս շուրջը, ոսկերքս ալ կը հրճվին ու կը խայտան։“

Երեսնամեայ երիտասարդի գլուխը մտնում է օղակի մէջ, դահիճը քաշում է ոտքերի տակից աթոռը։ Մի կարճ խռխռոց, ոտքերի և կապած թևերի անկանոն մի երկու թափահարութիւն և... ամեն բան վերջացած է արդէն։ Կապտած դիակը կախ է ընկած պարանից, բաց կրծքով ու վզով, իբրև յաւիտենական վրէժխնդրութեան նշան, իբրև բողոք ստոր բռնակալութեան դէմ։

Մի ասող ևս մարեցաւ, մեր յեղափոխական փշոտ ասպարէզից մի անձնազոհ ևս դուրս ընկաւ։ Բայց քանիսը ծնվեցին մի՛միայն օղակից կախ ընկած, Մարգարի ճոճացող դիակի ազդեցութեան տակ...

Գրիգոր

—

Մեր ծրագիրը լոյս տեսաւ առանձին գրքոյկով։

* * *

Նուիրատվութիւնների ցուցակ.—

Օր. Խ.-ից 68ր. Գ. Վահ.-ից 364ր. Բ. Լ. Թ.-ից 10ր. Բ. Ան.-ի միջ. 340ր. Պ.-ից կրակ Օգ. 82ր. Բ. Բնկլ.-ից 100ր. Կայծիկ խմբ.-ից 13ր. Նոյն 95ր. Վահունի 51ր. 954. Ջալալ. Խ.-ից 14ր. Լիս.-ից 65ր. Մաթաբից 15ր. Բգ.-ից 50ր. Գեր. Վերիս. ք.-ից Տ. Ա.-ից 30ր. Գ. Խ.-ից 40 ֆր. Օր. Մկնից 20 ֆր. Պոլսից Հայկ Արամից 10 ֆր. և 20զր., Շտ.-ից Կ.-ից 5 մրկ։ Եր Խարիսխ խմ. 41ր. 57կ.

№ 10-ում տպագրած՝ Բգ.-ից 600ր., 200ր. ստացվել են Պ. միջոցով, Երն. 100ր. Ֆարհադի միջոցով Ա. ըիւրոյում։ Նոյն ըիւրոյում ստացված են՝ Բգ.-ից 150ր., Ցզ.-ից 50ր.

—

Դաշնակցութեան անծանօթներից խնդրվում է թերը թակցութեան և նուիրատվութեան համար դիմել.

L. Boole, 15, Augustus Rd. Hammersmith, W. London.

Վիեննա. Դաշնակցութեան ազատ տպարան